

**ՄԻՒՍ ՄՈԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

---

Գ ր ե ց

**ԵԿԱՐԴՐ ԳԵՂ ՏԱՅՖ**

---

Բնագրից Հայերէնի Վերածեց

ՎԵՐ. ՅՈՎՀ. Մ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԿՈՉՆԱԿ ՏՊԱՐԱՆ

1999

BIBLIOTHECA ARMENA  
GARO H. KAZAZIAN  
Chicago, Ill., U.S.A.

9  
131



### ՀԵԽՐԻ ՎԵՆ ՏԱՅՖ

Հեղինակի Թոյլտուրեալք Անգլիերէն  
Բնագրից Հայերէնի Վերածեց

Վեր ՅՈՎԱՀ Մ ՅՈՎԱԿԻՄԵՍՆ

ԿՈԶՆԱԿ ՏՊԱՐԱՆ

ՏԵԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԹՅ. ՓՈՒՇՄԱՆԵԱՆԻՆ,

մեր օքերի

### «ՄԻՒՍ ՄՈԳ»-ԻՆ

Ներկայ քարգմանութիւնը իբրհւ խորին  
յարգանքի ու հիացմունքի մի համեստ  
արտայայտութիւն  
— նուիրում է

ԹԱՐԳՄԱՆԻՉԻ

Copyright, 1895  
by Harper and Brothers  
New York and London

Ով երկինքը որոնում է միմիայն իր  
հոգին փրկելու,  
Երեւ նոյնիսկ պահէ նամբան, նա կը  
մնայ նպատակից շատ հեռու.  
Մինչ ով սիրոյ մէջ ընթանայ, 'թէ  
մոլորուէ ՚իսկ շարունակ:  
Աստուած ճրան կառաջնորդէ ուր սրբերն  
են, միշտ երջանիկ, փառունակ:



Ա Մ Ե Ր Ի Կ Ե Ա Ն  
1899-ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
Ց Ա Ռ Ա Զ Ա ԲԱՆԻ Ց Ց

Հենրի Վեն ՏԱՅՔԻ ներկայ աշխատութիւնը մեծ ընդունելուրիւն է զանել շատ երկրաբերի մէջ եւ քարգմանուն է մի շարք լեզուների։ Սրբազնուած յաջորդական հրատարակութիւններից մէկի Յառաջարանից ժանում ենք հեղինակի մի ժանի կարեւոր լուսաբանուրիւնները, որոնք իրեն ուղղուած քազմարիւ հարցումներից ումանց պատասխաններն են։

Ծագումը. — թէ որտեղից է ծնուել այս պատմութիւնը, չը գիտեմ — աստղերից թերեւս։ Սակայն մի բան որոշ է թէ ուրիշ որեւէ զրքի մէջ զրուած չէ եւ ոչ իսկ արեւելեան որեւէ լեզենափ մէջ կարելի է զտնել։ Այդուհանդերձ երբէք չեմ ունեցել այն կարծիքը, թէ այս լոկ իմ ստեղծագործիւնն է։ Այս ուզարկուել է ինձ որպէս մի պարզեւ, որից եւ կարելի է ճանաչել Պարգևուզը, նոյնիսկ երբ իր անունն իսկ չը յիշուէ...

Ծագման Պարագաները. — ...Մենաւոր ու ծանր զիշերների ամենածանր բեռը մեր մէջ ստեղծած այն վախն է՝ թէ մի գուցէ այս աշխարհի մէջ մեր գործը ընդհատուի եւ այն էլ



28-151

131-29

Ճիշտ այն ժամանակ, երբ մենք այդ դործը դեռ  
եւս չա՛տ անկատար ենք գտնում. երբ գիտենք  
թէ գեռ չենք լուծել մեզ առնջող առեղծուածը,  
չենք հասել մեր հետապնդած նպատակին,  
չենք վերջացրել մեր որդեղբած աշխատանքը,  
եւ թէ մենք ճանապարհի մէջն ենք գեռ, մինչ  
մեր ճամբորգութիւնը թերեւս հչոց հիմա պի-  
տի բնդհատուէ ու վերջանայ անթափանց խա-  
ւարի մէջ։ Այս մենաւոր ու երկար գիշերնե-  
րից մէկում ներջնչուեց ինձ այս պատմութիւ-  
նը։

Խմասոր. — «Ի՞նչ է այս պատմութեան ի-  
մասոր», Հարցնում են ինձ։

Եթէ զրա իմաստը կարելի լինէր մէկ խօս-  
քով արտայայտել, անօդուած էր այս ամբողջ  
պատմութիւնը զրել։

Հենրի Վեն ՏԱՅՔ

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Դուք արդեն զիտէք Արեւելքի երեք  
Մողերի պատմութիւնը, քէ ինչպէս  
նրանք շատ երկար ճամապարհ կտրե-  
ցին անցան, իրենց ընծաները Բերլէ-  
հէմի մսուրի Մանկանը մատուցելու  
համար։ Սակայն երբեւիցէ լսե՞լ էք  
արդեօֆ Միւս Մողի պատմութիւնը, որ  
նոյնպէս տեսաւ ասողը ծագելիս եւ  
նամրայ ընկաւ նրան հետեւելու, բայց  
իր եղբայրների հետ Մանուկ Յիսուսի  
մօտ չը հասաւ։ Լսե՞լ էք արդեօֆ քէ  
ինչպէս այս չորրորդ ուխտաւորի փա-  
փազը միշտ էլ անյաջողութիւնների  
պատահելով չը բաւարարուեցաւ, քէեւ  
նիշտ այդ չը բաւարարումի մէջ իր  
բաղձանելքը իրականացաւ ։ Լսե՞լ էք արդ-  
եօֆ նրա երկար ուխտագնացութեան,  
իր հոգու փորձարկութիւնների մասին,  
եւ քէ ինչ զարմանալի կերպով իր փըն-  
տըռածը գտաւ։ Ահա այս պատմու-  
թիւնն է որ կ'ուզէի պատմել ինչպէս  
որ լսեցի երազների Աշխարհում՝ Մար-  
դու Սրտի Ապարանիքում։

ԵՐԿՆԻՑ ՆՇԱՆԸ

131- 29



## Ե Ր Կ Ն Ի Ց Ն Շ Ա Ն Լ

Այն օրերում, երբ Օգոստոս Կայս-  
րը տիրում էր շատ արքաների վրայ եւ-  
Հերովդէսն էլ թագաւորում էր Երու-  
սաղէմում, Պարսկաստանի լեռների  
մէջ՝ Եկրատանում ապրում էր մի  
մարդ, Արթարան Մեղացի անուննվ:

Նրա տունը բարձրանում էր մին-  
չեւ արքունի գանձատունը շրջապատող  
եօթը պարիսպների կատարը: Պարսպի  
եւ ճերմակ, բոսրագոյն ու կապոյտ,  
եւ կարմիր, եւ արծաթի ու ոսկեգոյն  
ատամների վրայով երեւոմ էր այն բը-  
լուրը, որի վրայ շողշողում էր պար-  
թեւ կայսրերի ամառանոց-արքունիքը՝  
զերթ մի գոհար եօթնապատիկ պսակի  
մէջ:

Արթարանի բնակարանի շուրջը  
տարածւում էր մի գեղեցիկ պարտէզ՝  
ծաղիկներով ու պտղատու ծառերով  
պճնուած, Որոնթէս լերան դարաւանդ-  
ներից հոսող երկու տասնեակ վտակ-  
ներով ջրարրի, ու անթիւ թռչունների

Երդի գեղգեղանքներովը լեցուն։ Գոյ-  
ները սակայն ծածկուել էին անուշա-  
րոյր ու մեզմ խուարի մէջ սեպտեմ-  
բերեան այդ ուշ զիշերուայ, որի զիւ-  
թիչ լուութեան մէջ, թափանցիկ ու խո-  
րը, մարել էր ամեն ձայն առուակ-  
ների մեզմիկ խոխոչից զատ, որ լըս-  
ուում էր շուքերի մէջ և՛ւ հեծկլուուն և  
քրքջալի մի ձայնի պէս։

Պարտէզի ծառերից շատ բարձր՝  
վերնատան մէջ, որի շքեզօրէն վարս-  
գուրուած կամարների միջից փայլիր-  
լում էին լոյսի ազօտ ցուքերը, տան-  
տէրը խորհրդակցում էր իր բարեկամ-  
ների հետ։

Ուտքի վրայ, գլխաւոր գրան սե-  
մին, սպասում էր նա իր հերերին բարի  
գալուստ մալթելու համար. բարձրա-  
հասակ էր ու թխաղէմ, մօտ քառաս-  
նամեայ, լայն յօնքերի տակ զետեղ-  
ուած փայլուն աչքերով եւ գեղեցիկ ու  
նուրբ շրթունքների շուրջը նրբօրէն  
քանդակուած անյոզդողդ դժերով, ճա-  
կատը՝ երազողի, բերանը՝ զինուորի

— զիւրազգած, բայց անյոզդողդ կամ-  
քի տէր — մէկը նրանցից, ովքեր որ  
դարի մէջ էլ որ ապրելու լինեն, ծըն-  
ւած են ներքին պայքարների, անվախ-  
ճան վիճառումների, անլուծելի ինչու-  
ների համար։

Նրա մաքուր ճերմակ բրդից ոլո-  
րեզուլ ձգուած էր մետաքսէ պատ-  
մուճանի վրայ. սպիտակ ու սրածայր  
մի խոյր հանդչում էր իր սեւ, ծփուն  
մաղերին։ Այս էր կրակապաշտ Մո-  
գութեան քահանայական հաղուստը։

— Բարի՛ եկաք, — ասաց նա ամեն  
մէկին մեզմ ու հաճելի ձայնով, երբ  
նրանք մէկը միւսի ետեւից ներս էին  
մտնում սենեակը, — Բարի՛ եկաք Ար-  
դիւս, խաղաղութիւն ընդ ձեզ Ռողասփ  
եւ Տիգրան, եւ ընդ ձե՛զ, հա՛յը իմ  
Արդար։ Դուք բոլորդ էլ բարի եկաք։  
Այս տունը լուսաւորուում է ձեր ներ-  
կայութեան ուրախութիւնովը։

Ինը հոգի էին նրանք, թէեւ տա-  
րիքով իրարից շատ տարբեր, նման է-  
լին բազմերանդ մետաքսէ հիւսուած ի-

րենց հագուստներից կախուած Պարթեւ ազնուականներին բնորոշող սպիտակնյու ու ծանր մանեակներովն ու կրծքերին հաստատուած ոսկէ թեւաւոր բոլորակներովը, որ Զբազաշտի աշակերտ լինելու նշանն էր:

Նրանք տեղաւորուեցին սենեակի խորքում, փոքրիկ ու սեւ սեղանի շուրջը, որի վրայ փայլում էր մի ազօտ բոց: Արթարանը, որ սեղանի մօտ կանդնած կրակի վրայ զգմաս(\*)ի բարակ ոստերի մի խուրձ էր երերացնում, արծարծեց կրակը շոճիի չոր ծիղերով ու անուշահոս իւղերով. ապա սկսեց Եասնայի վաղեմի երգը: Իր բարեկամների ձայները միացան Ահուրա — Մազդայի սքանչելի օրհներդին:

Մենք պաշտում ենք Աստուածային  
Հոգին,  
Որ տէրն է ամեն իմաստութեան ու  
ամեն բարութեան,

(\*) Tamarisk.

Շրջապատուած Անմահներովը Սուրբ, Որ տուիչներն են ամեն յաջողութեան ու ամեն օրհնութեան: Բերկում ենք մենք իր ձեռքի գործերով, իր նշմարտութիւնն ու զօրութիւնը խոստովանելով:

Փառաբանում ենք ամեն մաքուր բան, Քանզի սա է միայն իր Ստեղծագործութիւնը՝ Կորհուրդները նշմարիտ եւ խօսիերն ու գործերը միշտ զովեստի արժանի. Այս բոլորը Նրանով են լոկ ապրում, Սրանց համար մենք Նրան ենք օրհներգում:

Լսի՛ր մեզ, ո՞վ Մազդա; Դու ապրում ես ձշմարտութեան ու երկնային բերկը, Պանֆի մէջ, Մազրի՛ր մեզ կեղծիքից, պահի՛ր չարից ու մեղֆերի կապանֆից. Կեանիդի ուրախութիւնն ու լոյսը

Մեր տրտմուքեանն ու խաւարի մէջ  
ցողի՛ր :

Փայլի՛ր մեր պարտէզների ու դաշտերի  
վրայ, Փայլի՛ր մեր գործերի ու հիւսուածք-  
ների վրայ, Փայլի՛ր մարդկային ամբողջ ցեղի վը-  
րայ, հաւատացեալ թէ անհաւատ.  
Փայլի՛ր մեզ վրայ գիշերուան ընթաց-  
քում, Փայլի՛ր մեզ վրայ զօրուքեամբդ  
կարող, Եւ մեր սուրբ սիրոյ բոցն ու մեր  
օրինուքեան երգն ընդունէ:

Բարձրանում էր կրակը երդի հետ  
ու ձարձատում ներդաշնակօրէն, կար-  
ծես թէ երաժշտական բացերից չինուած  
լինէր : Նրա որայծառ լոյսը ողոզում էր  
ամբողջ յարկաբաժինը երեւան հանե-  
լով գրա պարզութիւնն ու որայծառու-  
թիւնը : Յատակը մուգ կապոյտ աղիւ-  
սից էր, սպիտակ երանդներով . արծա-

թի ծոսկերով պարուրուած քառակու-  
սի սիւները բարձրանում էին կապոյտ  
պատերի զիմաց : Կամարակասպ լուսո-  
մուտների վերի բացուածքը վարա-  
գուրուած էր լազուր մետաքսով : Շա-  
փիւղածածկ կամարածեւ առաստաղը  
նմանում էր ջինջ երկնքին՝ արծաթեայ  
աստղերով ընդելոյդ : Առաստաղի չորս  
անկիւններից ոսկէ չորս մողական-  
ձախարակներ էին կախուած, որ «աստ-  
մողական-ձախարակներ», որ «աստ-  
ուածների լեզուներ» էին կոչում : Ա-  
րեւելեան ծայրամասում, սեղանի ե-  
տեւը, բարձրանում էին երկու սիւներ՝  
մուգ կարմիր պորփիւրէ . գրանց վրայ  
հանդչում էր նոյն քարից մի սեամ, ո-  
րի վրայ քանդակուած էր մի թեւաւոր  
աղեղնաւոր՝ իր աղեղը լարուած եւ իր  
նեաը լարին պատրաստ :

Գլխաւոր մուտքը, սիւների արան-  
քում, որ բացում էր զէսի տանիքի  
դետինը, ծածկուած էր հասուն նուան  
գոյնի մի թանձր վարագոյրով, ասեղ-  
նազործուած ոսկեայ անթիւ ճառա-

գայթներով, որ զետնից վեր էին երկարում։ Բայ որում սենեակը նմանում էր աստեղագարդ մի խաղաղ զիշերի, լազուր եւ արծաթեայ, արշալոյսի վարդագոյն խոստումներով շառագոյն իր արեւելքովը միասին։ Այն էր, ինչոր մի մարզու տուն պիտի լինի — տանտիրոջ հոգու եւ նկարագրի արտայայտութիւնը։

Երբ երգը վերջացաւ, նա իր բարեկամներին գառնալով նրանց հրատերեց սենեակի արեւմտեան ծայրամասում զետեղուած բազմոցի վրայ նըստելու։

Դուք այս զիշեր եկել էք, — ասաց նա, նրանց ուղղելով իր հայեացքը, — իմ հրաւէրով, իրրեւ Զրադաշտի հաւատարիմ աշակերտները ձեր պաշտամունքը նորոգելու եւ զէպի Մաքրութեան Աստուածն ունեցած ձեր հաւատքը վերաբարձելու ինչպէս այդ կրակը, որ վերաբարձուեցաւ սեղանի վրայ։ Մենք ոչ թէ կրակն ենք պաշտում այլ նրան, որի խորհրդանշանը լինելու

ընտրուած է կրակը, որովհետեւ ըստեղծուած բոլոր բաների մէջ դա է ամենամաքուրը։ Այդ կրակը մեզ յայտնում է այն Աստուածը, որ Լոյս է եւ ձշմարտութիւն։ Այնպէս չէ<sup>o</sup>, հայր իմ։

— Շատ ճիշտ է, որդիս, — պատասխանեց պատկառելին հայր Արգարը, — լուսաւորուած մարդիկ կռապաշտներ չեն երբէք։ Նրանք բարձրացնում են ձեւի քօղը եւ այսպէս յառաջանում դէպի իրականութեան խորանը. հինաւուրց խորհրդանշանների միջոցով շարունակ նոր լոյս ու նոր ձըշմարտութիւն է յայտնւում նրանց։

— Լսեցէք ինձ ուրեմն, հայր իմ եւ բարեկամներս, — ասաց Արթարանը քաղցրութեամք, — եւ ես ձեզ պատմեմ այն նոր լուսոյ եւ ճշմարտութեան մասին որ ինձ յայտնուել է նշաններից ամենահին նշանի միջոցով։ Մենք միասին ենք խուզարկել բնութեան գաղտնիքները եւ ուսումնասիրել ջրի, կրակի եւ բոյսերի բուժիչ զօրութիւնը։ Քննել ենք եւ մարդարէական դրֆերը,

որոնց մէջ ազօտ կերպով խօսուել է  
ապագայի մասին՝ դժուարը բոնելի  
դարձուածքներով։ Սակայն բոլոր ուս-  
մունքներից ամենաբարձրը աստղերի  
դիտութիւնն է։ Որոշել նրանց ընթաց-  
քը՝ նշանակում է կեանքի գաղանիքի  
կծիկը բանալ, ոկզրից մինչեւ վերջ։ Եւ  
եթէ կարողանայինք կատարեալ կեր-  
պով հետեւել նրանց շարժումներին,  
մեզնից ոչինչ չէր կարող ծածկուել։  
Սակայն նրանց մասին մեր ունեցած  
ծանօթութիւնը գեռ անկատար չէ<sup>o</sup> մի-  
թէ։ Մի՞թէ չը կան դեռ շա՞տ աստ-  
ղեր, մեր հորիզոնից դուրս — լոյսեր,  
որ ծանօթ են նրանց, ովքեր ապրում  
են հեռաւոր հարաւի երկրներում,  
փունտի համեմների ծառերի եւ Ոփիրի  
ոսկեհանքերի մէջ։

Ունկնդիրների միջով հաւասնու-  
թեան մի շշուկ անցաւ։

— Աստղերը, — ասաց Տիգրանը, —  
Յաւիտենականի մաքերն են՝ անթիւ,  
բայց մարզու մաքերը կարելի է մի առ  
մի հաշուել իր կեանքի տարիների որէս։

Մոգութեան իմաստութիւնը երկրի բո-  
լոր իմաստութիւններից գերազանց է  
ու վսեմ, որովհետեւ դիտէ իր իսկ տը-  
ղիտութիւնը։ Եւ այս է զօրութեան  
գաղտնիքը։ Մենք մարդկանց պահում  
ենք մի նոր արեւածազի որոնումի եւ  
սպասումի մէջ, սակայն մենք իսկ զի-  
տենք թէ խաւարը հաւասար է լոյսին  
եւ թէ զրանց երկուսի մէջ եղած պայ-  
քարը պիտի չը վերջանայ յաւէտ։

— Այդ ինձ չի բաւարարում, — պա-  
տասխանեց Արթարանը, — որովհետեւ  
եթէ սպասումը անվախճան պիտի լինի  
ու երբէք էլ պիտի չիրականանայ, ի-  
մաստութիւն չէ ուրեմն որոնումն ու  
սպասելը։ Մենք Յոյների այն նոր ու-  
սուցիչներին պիտի նմանէինք, ովքեր  
ժխտում են ճշմարտութեան գոյութիւ-  
նը, իմաստուն համարելով միայն նր-  
րանց, ովքեր ապրում են գտնելու եւ  
զիմակագերծելու այն բոլոր ստութիւն-  
ները, որոնց աշխարհը հաւատացել է  
իբրեւ ճշմարտութիւններ։ Բայց նոր  
արեւածազը անտարակոյս պիտի բաց-

ուի որոշուած ժամանակին։ Մեր իսկ դրգերը չե՞ն ասում միթէ թէ այս պիտի պատահի եւ թէ մարդիկ մի մեծ լոյսի պայծառութիւնը պիտի տեսնեն։

— Ճշմարիտ է, — ասաց Հայր Արդարը։ Զրադաշտի իւրաքանչիւր ճշմարիտ աշակերտ զիտէ Աւեստայի այդ մարգարէութիւնը եւ այն իր սրտի մէջ է կրում շարունակ։ «Այն օրը «Սոսիա Յաղթականը» մարգարէների միջից պիտի բարձրանայ Արեւելքում։ Նրա շուրջը մեծ փառք պիտի ծագի եւ նա կեանքը յաւիտենական, անապականելի ու անմահ պիտի դարձնէ եւ մեռելները պիտի յարուցանէ։

— Այդ մարգարէութիւնը չառ մութ է, — ասաց Տիգրանը, — եւ կարելի է երբէք էլ պիտի չը հասկանանք այդ։ Աւելի լաւ է զրադուել աւելի մօտիկ ու հասանելի բաներով եւ ջանալ Մողութեան ազգեցութիւնը բարձրացընել իր իսկ երկրի մէջ, քան սպասել մէկին, որ կարելի է մի օտարական պիտի լինի եւ որի համար մենէ մեր

իշխանութիւնից պիտի հրաժարուենք։ Թւում էր թէ միւսները համամիտ էին այս խօսքերին։ Նրանց մէջ համաձայնութեան մի լոիկ զգացում էր տիրում։ իրենց նայուածքների մէջ նըշմարելի էր այն անբացատրելի արտայայտութիւնը, որ ծնւում է որեւէ ատենախօսի իր ունկնդիրների սրտերում մրափող խորհուրդների վրայով խօսելիս։ Բայց Արթարանը, դէմքը բոցալառ, դէպի Արգարը դարձաւ ու ասաց.

— Հայր իմ, այդ մարգարէութիւնը իմ հոգւոյս գաղտնարանումն եմ պահել։ Այն կրօնը որ զուրկ է մի մեծ յոյսից, նման է մի սրբազն սեղանի, որի վրայ չկայ կենդանի կրակը։ Այժմ այդ բոցը աւելի պայծառութեամբ է վառւում իմ հոգւոյս մէջ, եւ իր լոյսով կարգացել եմ ուրիշ խօսքեր էլ, որոնք նոյնպէս ճշմարտութեան աղբիւրիցն են բղիսում ու աւելի յստակօրին են խօսում «Յաղթական»-ի փառաւոր գալստեան մասին։

Այս խօսքերի հետ իր պատմումանի ծոցից նա զուրս հանեց եւ ինսամքով իր ծունկերի վրայ բացաւ նուրբ մագաղաթի երկու փոքրիկ դլաններ :

— Անցեալում, մեր հայրերի Բաբելոն գալուց չառ առաջ, Քաղկէայում ապրում էին իմաստուններ, որոնք առաջին Մոդերին երկնքի դաշտները սովորեցրին : Բնովրեան Բաղամը նըրանց մէջ ամենակարողներից մէկն էր : Լսեցէք նրա մարդարէութեան խօսքերին .

«Յակորից մէկ Աստղ է ծագում եւ Խորայէլից մի գաւազան է բարձրանում» :

Տիգրանը, շրթունքները քամահրանքով վեր կախելով, ասաց .

— Այն ժամանակ Յուղան գերի էր Բաբելոնի ջրերի մօտ եւ Յակորի զաւակները ծառայութեան մէջ էին մեր թագաւորների տիրապետութեան ներքեւ : Խորայէլի ցեղերը ցրուած են այժմ յեռների մէջ անհովիւ ոչխարների նըրան, իսկ Յուղայի երկում Հոռվմի

լուծի տակ աղլրող մնացորդիցն էլ ոչ ասալ կը ծաղի եւ ոչ էլ զաւազան կը բարձրանայ :

— Այգուհանդերձ, — պատասխանեց Արթաբանը, — մեր մէծ թագաւոր Կիւրոսի այնքան յարդած ու սիրած Բաղդասար իմաստունը, տեսիների այդ կարող մեկնիչը, Երրայեցի Դանիէլն էր : Մեր ժողովուրդն իսկ նրան իրեւ մի վստահէլի մարդարէ եւ Յաւիտենականի խորհուրդների մի թարգման է ճանաչում : Ահաւասիկ նրա զըրածը, — ասաց Արթաբանը եւ սկսեց կարդալ միւս մազաղաթից . «Եւ իմացիր ու հասկացիր, որ Երուսաղէմը դարձեալ չինելու համար հրամանը գուրս գալուց մինչեւ Մեսիս իշխանը եօթը եօթնեակ եւ վաթսունեւերկու եօթնեակ կայ» :

— Բայց որդի՛ս, — ասաց հայր Արգարը տարակուսանքով, — դրանք խորհրդաւոր թուեր են : Ո՞վ կարող է դրանք մեկնել կամ դրանց իմաստը գտնել :

— Դրանց լմասուր յաբանուել է  
ինձ, ինչպէս նաև Մազերից իմ երեք  
բարեկամներին — Մելքոնին, Գասպա-  
րին և Բաղդասարին։ Մենք պրապել  
ենք Քաղգէացիների հին տախտակները  
և հաջուել ենք ժամանակը. այս տար-  
ուան է զուգապիզում։ Մենք ուսում-  
նասիրեցինք երկինքը և այս տարուայ  
գարնանը տեսանք թէ ինչպէս ամենա-  
մեծ տառապերից երկուուր իրար էին մօ-  
տենում Զկան համաստեղութեան մէջ,  
որ Երբայցիների Տունն է. այնազ մի  
նոր տառալ էլ տեսանք, որ վայլեց մի  
զիշեր և յետոյ անյայտացաւ։ Այժմ  
այդ երկու մոլորակները դարձեալ ի-  
րար են մօտենում. այս զիշեր նրանց  
միաւորութեան ժամանակն է։ Իմ երեք  
եղբայրները կակում են Բորչիպապայի  
«Յօթը-Գնաեր» հինաւուրց տաճարի  
մէջ, Բարելոնիայում, և էլ՝ այսուեզ։  
Եթէ տառալը դարձեալ երեւաց, նրանք  
տասն օր Տաճարի մէջ ինձ պիտի սպա-  
ռն, և յետոյ միասին Երուսաղէմ պի-  
տի Երթանք տեսնելու և Երկրպագելու

այն խոստացուած Մեսիային, որ իս-  
րայէլի Թագաւոր պիտի ծնուի։ Հա-  
ւատում եմ թէ նշանը պիտի երեւայ.  
ևս պատրաստ եմ ճանապարհուելու։  
Ծախել եմ տունս ու ամբողջ ստաց-  
ուածքս եւ զնել եմ այս երեք զոհար-  
ները — մի չափիւզայ, մի կարմիր  
բուստ եւ մի մարզարիտ — Թագաւու-  
րին իբրեւ ընծայ տանելու։ Ուստի  
խնդրում եմ ձեզ միանալ ինձ այս ուխ-  
տագնացութեան մէջ, որպէսզի միասին  
ուրախանանք Երբ զտնենք մեր ծառա-  
յութեան արժանի Խշանին։

Այս խօսքերի հետ նա զուրս հանեց  
իր զօտիի ամենախորը ծալքերից Երեք  
խոչոր ու սքանչելի զոհարներ — մէկը  
կապոյտ՝ կարծես զիշերուայ Երկնքից  
պոկուած մի կառը լինէր, մէկը կար-  
միր՝ ծագող արեւի չողերից էլ աւե-  
լի, մէկն էլ յոտակ՝ զերթ ձիւնածածկ  
լեռան կատարը վերջարոյան — եւ իր  
ծունկերի վրայ բացուած մազաղաթ-  
ների վրայ զրու։

Բայց իր բարեկամները օտարսամի

ու արտասովոր աչքերով էին նայում  
նրան։ Տարակուսանքի եւ կասկածի  
քողը ծածկեց նրանց դէմքերը ինչպէս  
մէզը, որ բարձրանում է ճահիճներից  
բլուրները ծածկելու։ Նրանք իրար նա-  
յեցին զարմանքով ու կարեկցութեամբ՝  
անհաւատալի խօսքեր, ինքնի տեսիլքի  
մի պատմութիւն կամ անկարելի ճեռ-  
նարկի մի սուաջարկութիւն լսողների  
պէս։

Վերջապէս Տիգրանն ասաց.

— Երթարան, սա մի սին երադ է  
որ զալիս է աստղերը չափեց աւելի զի-  
տելուց եւ վսեմ խորհուրդների յոյզքե-  
րից։ Աւելի խմասութիւն է ժամանա-  
կը Կալայի կրակին նուիրուած նոր Տա-  
ճարի համար զրամ ժողովելու համար  
գործածել։ Խսրայէլի կործանած ցե-  
ղից երբեւիցէ որեւէ թագաւոր ովտի  
չը բարձրանայ, ոչ էլ լոյսի եւ խաւո-  
րի մշտիճենական պայքարը պիտի վեր-  
ջանայ։ Մրանց սովասովը չուքերի ևոե-  
ւից վազողի կը նմանի։ Երթաս բարի։  
— Այս բաների մասին ոչ մի ծանօ-

թութիւն չունեմ, — ասաց Երկրորդը,  
— եւ իրեւ արքունի զանձի պահա-  
պահ, պաշտօն ինձ այսակին է կա-  
պում։ Որոնումը ինձ համար չէ, իսկ  
եթէ զու անպատճառ պիտի զնաս, բա-  
րի ճանապարհ։

Երրորդն ասաց.

— Տանս մէջ ննջում է իմ նորա-  
հարսու, ոչ կարսղ եմ նրան ձգել, ոչ էլ  
կարսղ եմ նրան վերցնել ինձ հետ այս  
օտարութի ճամբորգութեան մէջ։ Այս  
որոնումը ինձ համար չէ։ այդուհան-  
զերձ յաջողութիւն քեզ ուր որ էլ քայ-  
լերդ քեզ առաջնորդեն։ Արդ, Երթաս  
բարի։

Վերջինն էլ ասաց.

— Հիւանդ եմ ևս եւ ճամբի զրժ-  
ուարութիւնները կրելու անկարսղ.  
բայց եթէ զու զնալու լինես ծառանե-  
րիցս մէկը պիտի ուղարկեմ ճամբոր-  
գութեանդ մասին ինձ տեղեկութիւն-  
ներ հազորդելու։

Այսպէս մէկիկ-մէկիկ ամենքը  
մեկնեցին Արթաբանի բնակարանից։

Սակայն հայր Արգարը, որ ամենքից  
տարիքուն էր ու Արթարանին ամեն-  
քից աւելի սիրովը, յապաղեց մինչեւ  
որ ամենքը հեռացան. ապա յարեց  
ծանրութեամբ.

— Որդի՛ս, կարելի է ճշմարտու-  
թեան լոյսը երկնքում երեւացած այս  
նշանի մէջ է. այդ պարագային քեզ  
վստահապէս իշխանին եւ իր մեծ փառ-  
քին պիտի առաջնորդէ : Կամ կարելի է  
թէ, ինչպէս Տիգրանն ասաց, դա լոյսի  
ստուերն է միայն. այդ գէպքում դրան  
հետեւողը երկար պանդիստութիւն եւ  
ապարդիւն որոնում պիտի վաստակէ :  
Այդուհանդերձ, որդի՛ս, աւելի լաւ է  
լաւագոյնի նոյնիսկ ստուերին հետե-  
ւել, քան թէ վատթարով բաւականա-  
նալ. եւ յիրաւի բոլոր նրանք ովքեր ու-  
ղում են սքանչելի բաներ տեսնել պէտք  
է պատրաստ լինեն յաճախ մեն-մենակ  
ճամբորդելու : Ես չափազանց տարի-  
քում եմ մի այսպիսի ճամբորդութեան  
համար, բայց իմ սիրոս պիտի ընկե-  
րակցի քեզ ուխտազնացութեանդ մէջ

ցերեկ եւ գիշեր, եւ որոնումիու ար-  
դինքը պիտի իմանամ : Երթաս խաղա-  
ղութեամբ :

Ու այսպէս միւսների հետ նա էլ  
մեկնեց ու հեռացաւ արծաթեայ սաս-  
դերով ընդելոյդ այն լազուր սենեակից,  
Արթարանին միայնակ ձգելով :


Նա հաւաքեց իր գոհարները եւ  
դարձեալ իր գոտիի մէջ տեղաւորեց :  
Երկար ժամանակ դիտում էր սրբազն  
կրակը, որ պլազաց ու մարեց. ապա  
քայլեց սրահի միջով, բարձրացրեց ծա-  
նըր վարագոյրը եւ զոյդ մուգ կարմիր  
պորփիւրէ սիւների միջից անցնելով,  
տանիքը բարձրացաւ :

Աղմուկը, որ գեռ երկիրն իր քնից  
չարթնացած բարձրանում է, արդէն  
սկսուել էր. զով սիրքը, արեւածագի  
աւետարերը, վչում էր Որոնթէս լե-  
ռան բարձր ու ձիւնածածկ հեղեղաս-  
ներից : Թուչունները, կէս արթուն, ոս-  
տոստում էին գալլայլելով սւաւացող  
տերեւների մէջ. այդիների հասուն ող-

կոյդների բոյրը փչում էր մեղմ զե-  
փիւսի հետ:

Հեռում, արեւելեան դաշտավայ-  
րերի վրայ, տարածում էր ճերմակ  
մշուշը՝ ինչպէս մի լիճ։ Այսուղ, ուր  
Զագրուժի սուր կատարը սեպաձեւ ճեղ-  
քում էր արեւմտեան հորիզոնը, երկին-  
քը ջինջ էր ու յստակ։ Լուսընթագն ու  
երեւակը շարժում էին միասին տա-  
րածութեան մէջ զերթ բոցեղէն երկու  
դնտիկներ՝ իրար մէջ ձուլուելու շատ  
մօտ։

Մինչ Արթարանը դիտում էր այդ  
մոլորակները, ներքեւի խաւարից մի  
լազուր փայլակ ցոլաց, որ ծիրանա-  
գոյն փայլով պարուրուելով լուսա-  
փայլ բոսորագոյն մի գնտի փոխուե-  
ցաւ, թաւալելով գէպի վեր ակնախտիզ  
ճերմակութեան հասնող զաֆրանի եւ  
նարնջի ճառագայթների միջով։ Փոք-  
րիկ եւ անհունօրէն հեռու, բայց եւ կա-  
տարեալ իր բոլոր մասերի մէջ, բարա-  
խում էր գնտիկը վիթխարի կամարի  
մէջ, կարծես Մողի երեք գոհարները



«—Այս նշանն է, ասաց նա։»

լինէր, որ իրար ձուլուել լոյսի մի կեն-  
սալից սիրտ էին դարձել:

Նա խոնարհեցլեց իր գլուխը եւ իր  
ձեռքերով աչքերը ծածկեց :

— Այս նշանն է, — ասաց նա, —  
Թազաւորը դալիս է. Ես պիտի դնամ  
նրան դիմաւորելու:



ԲԱՐԵԼՈՒհ ԶՐԵՐԻ ՄՈՏ

Բ Ա Բ Ե Լ Ո Ն Ի Զ Բ Ե Բ Ի Մ Օ Տ

Վասդան, Արթարանի ամենամեծ  
թեւ նժոյլը, կազմ ու պատրաստ սպա-  
սել էր ամբողջ գիշերը իր դոմում ան-  
համբեր տոփելով սալայատակը եւ  
թափահարելով իր սահմար, կարծես  
բաժանելիս լինէր իր տիրոջ մտաղըու-  
թեան անձկութիւնը:

Թռչուններն իրենց վաղորդեան  
ուրախ երգերով զես օդը չը լեցրած ու  
ճերմակ մշուշը դաշտավայրերից զես  
չը բարձրացած, Միւս Մողը թամրի  
էր արգէն եւ սրարչաւ կտրում անց-  
նում էր մեծ պողոսան, որ երկարում  
էր Որոնթէս լեռան արեւմտեան ստո-  
րոտով:

Ո՞րքան սերտ, ո՞րքան մտերմիկ է  
դատնում ընկերականութիւնը ձիաւորի  
ու իր սիրական երիվարի միջեւ երկար  
ճամբորդութեան ընթացքում: Լոիկ ու  
խելացի մի բարեկամութիւն է զա, մի  
ներքին յարաբերութիւն, որի մէջ բա-  
ռերի կարիքը չի զգացւում:

Նրանք խմում են ճամբի եղերքի  
նոյն աղբիւրից եւ քնում հսկող նոյն  
աստղերի հսկանիի ներքեւ։ Միասին  
են վայելում վերջալոյսի գերող հմայ-  
քը եւ արշալոյսի կենսարեր բերկրան-  
քը։ Տէրն իր ուտելիքի խրաքանչիւր  
պատառը բաժանում է իր սոված ընկե-  
րոջ հետ, նրա նուրբ ու խոնաւ շրր-  
թունքների շոյանքը դդալով իր ափերի  
մէջ երբ նա սկսում է իր բաժին հացի  
կտորը իր տիրոջ ձեռքերի մէջ ուտել։

Առաւոտեան աղջամզին իր քնկոս  
երեսի վրայ դդալի տաքուկ ու համելի  
չնչի մեզմիկ շարժումից արթնանում է  
նա ու նայում վեր, իր հաւատարիմ ու-  
ղեկցի աչքերին, որ կազմ ու պատրաստ  
սպասում է օրուայ աշխատանքին։ Այս  
անբարբառ համակրանքի, այս լոիկ  
սիրոյ համար նա անշուշտ չնորհակալ  
պիտի լինի իր Աստուծուն — ինչ ա-  
նունով էլ որ Նրան կանչելիս լինի —  
եթէ միայն հեթանոս կամ անհաւատ  
չ։ Նրա առաւոտեան աղօթքը այս  
կրկնակի օրհնութիւնը պիտի պարու-

նակէ։ «Աստուա՛ծ, օրհնի՛ր մեզ եր-  
կուսիս, ձիուն ու իր հեծեալին, եւ  
պահիր մեր ոտքերը անկումից ու մեր  
հոգիները՝ մահուանից»։

Ապա վաղորդեան զով օդի մէջ  
սրնթաց սմբակները սկսում են բրենց  
եռանդուն նոււագը դոփել ճանապարհի  
երկարութեամբ, կարծես տոն տալով  
երկու սրտերի զարկերին, որ միեւ-  
նոյն տենչանքովն են բոցավառ՝ յաղ-  
թել միջոցը, կտրել առարածութիւնը և  
ճամբորդութեան հանգըռուանին հաս-  
նել։

Արթարանը իսկապէս լաւ եւ խմաս-  
տութեամբ պիտի քչեր իր ձին եթէ ու-  
գում էր միւս Մոգերի հետ դրած ժա-  
մանակը պահել, քանի որ ճամբան հա-  
րիւր յիսուն Փարսաղ էր եւ օրական  
ամենաշատը տասնեւհինգը կարող էր  
անցնել։ Բայց նա լաւ դիտէր Վասդա-  
յի կարողութիւնը, ուստի եւ յառա-  
ջանում էր առանց անձկութեան, ամեն  
օր որոշուած տարածութիւնն անցնե-  
լով, թէեւ պէտք էր ճամբան շարունա-

կել մինչեւ ուշ գիշեր եւ ոտքի ելնել  
արեւածագից շատ առաջ:

Այսպէս, նա անցաւ Որոնթէս լե-  
ռան մութ զառիվայրերը՝ հարիւրաւոր  
հեղեղների քարքարոտ ընթացքներովը  
ակօսուած :

Անցաւ նաեւ Նիսանի հարթ դաշ-  
տավայրերը, ուր ընդարձակ արօնե-  
րի վրայ երամակներով արածող հըս-  
չակաւոր ձիերը ցնցում էին իրենց բա-  
շերը Վասղան մօտենալիս եւ յանկար-  
ծակի սրանում հեռու, բազմաթիւ սրմ-  
բակների որսոտի տակ: Վայրի թուչուն-  
ները յանկարծ բարձրանում էին երամ-  
ներով մօրուտ մարգերից եւ մեծ խում-  
բերով ճախրում անհամար թեւերի չող-  
չողուն յոյզքով եւ զարմանքի սուր ձի-  
երով:

Նա կտրեց անցաւ Կոնքարարի ար-  
դասուոր գաշտերը, ուր դոփուող զետ-  
նի փոշին լեցնում էր օդը ոսկի մշուշով  
եւ կիսովին ծածկում Աստարթէի վիթ-  
խարի տաճարը, իր չորս հարիւր սիւ-  
ներով:

Բաղիստանում, ապառաժի աղ-  
բիւրներով ոռոգուն այգիների մէջ, նա  
երկար գիտեց այն լեռը, որի ահագին  
ու խորտուբորտ ճակատը կախում էր  
ճանապարհի վրայ. բարձրում, յաւի-  
տենական ժայռի երեսի վրայ նա տե-  
սաւ Դարեհ թագաւորի քանդակուած  
պատկերը՝ պարտուած թշնամիներին  
կոխկոտելիս, ինչպէս նաեւ իր պա-  
տերազմների ու յաղթանակների փքուն  
ցանկը:

Շատ ցուրտ ու ամայի կիրճերի վը-  
րայով, բլուրների հողմահար լանջերի  
երկարութեամբ տանջանքով սոլոսկե-  
լով, շատ սեւ լեռնանցքների միջով —  
ուր ոռնում էր գետը ու յառաջ նետ-  
ում վայրենի ուղեցոյցի նման — ժադ-  
տուն շատ հովիսների, որթերով ու  
պտղատու ծառերով լեցուն զեղին կը-  
րաքարի գարատավերի միջով, Կարի-  
նէի կաղնու պուրակներից եւ գահա-  
վէժերով պարսպուած Զագրոշի մութ  
դոներից, Կալա հին քաղաքի միջով —  
ուր շատ տարիներ առաջ Սամարացի-

ները գերի էին պահուել, — նորից դէպի դուրս — ուր չըջակայքի բլուրների մէջ փորուած զօրաւոր մուտքի մօտ ժայռի վրայ քանդակուած տեսաւ Մողութեան Քահանայալեալի պատկերը՝ վեր բռնած ձեռքերով, կարծես օրհնելիս լինէր ուխտաւորներին դարէ դար, — ապա ծայրէ ի ծայր զեղձի ու թուզի անտառներով լեցուն նեղ կիրճի միջով — ուր Գինդէս գետը փրփրալով վագում էր նրան զիմաւորելու, — ըրնձի ընդարձակ զաշտերի վրայով — ուր տարածւում էր աշնանային մահացու մշուշը, — զետի հսսանքի երկարութեամբ, կաղամախի եւ հնդկարմաւների երերուն ստուերների տակով, ցածուկ բլուրներով, ողորկ հարթավայրերով — ուր ճամբան նետի պէս ուղղղնթաց երկարում էր թվուտ դաշտերի եւ խանձուած մարզերի միջով, — Կթեսիֆոն քաղաքից, ուր Պարթեւ կայսրերն էին թագաւորում, եւ Սելեւկիայից, Ալէքսանդրի չինած մեծ մայրաքաղաքից, — անցնելով Տիգրեսի

աղմկալից հեղեղների եւ բազմաթիւ նեղուցներովն Եփրատի, որ դեղին էր հոսում արտերի մէջ, — Արթարանը յառաջ էր սլանում շարունակ, մինչեւ որ տասներորդ օրուայ երեկոյին հասաւ մարդաշատ Բարեկանի խորտակուած պարիսպների ստորաբ:

Վասդան զրեթէ ուժասպառ էր զարձել: Արթարանը ուրախութեամբ կ'ուզէր քաղաքը մանել իրենց համար հանդիսաւ եւ սնունդ փնտոելու, սակայն նա զիսէր թէ զեռ երեք ժամուաց ձանապարհ կար մինչեւ «Եօթը Գնաեր» Տաճարը, ուր կէս զիշերից առաջ ինքը պիտի հասնէր, ևթէ ուզում էր իրեն սպասող ընկերներին այնտեղ գտնել: Ուստի կանդ չ'առաւ, այլ թփուտ դաշտերի միջով անյոզդողդ-յառաջացաւ:

Արմաւենիների պուրակը դալուկ ծովի մէջ մոայլութեան մի կղզու էր հմանում: Վասդան ստուերների մէջ մտնելով, դանդաղեցրեց իր քայլերը եւ սկսեց իր ճամբան աւելի խնամքով ու սնել:

Ստուերների ամենավերջի ծայրում կարծես զգուշացումի մի սարսուռ անցաւ նրա մարմնով. վտանգի կամ զժուարութեան հոտ առաւ նա. նրա սրտում ոչ թէ փախչելու, այլ ընդհակառակը աւելի նախապատրաստուած ու իմաստութեամբ այն դիմագրաւելու մտադրութիւնը կար, ինչ որ մի լաւ ձիու սովորութիւնն է: Պուրակին անշարժ էր ու տու, որպէս գերեզման. ոչ տերեւ էր շարժւում, ոչ թուչուն՝ երդում: Վասդան շատ զդուշութեամբ էր վերցնում իր քայլերը, զլուխը կախ ձգած, մերթընդիրթ ու շիմութեամբ վնչացնելով: Ի վերջոյ անձկութեան ու սոսկումի մի արագ շունչ քաշեց եւ վերջին արժաւենու ստուերի տակ երկարուն մի մութ զանգուածի դիմաց անշարժ կանդնեց, ամբողջ մարմնով զողալով:

Արթաբանը վայր իջաւ: Աստղերի աղօտ լոյսի տակ տեսաւ մարդկային մի կերպարանք՝ ճամբի երկարութեամբ ձգուած: Մաշուած հաղուստից ու արժ-

գոյն երեսի ուրուազից դատելով, հաւանաբար նա մէկն էր Երբայցի ինեղճ տարագիլներից, որ մեծ թուով զեռ ապրում էին այդ շրջանում: Նրա զունաս մորթը, մազալաթի պէս չոր ու գեղին, նշան էր մահարեր տենդի որ աշնան եղանակին աւերում էր այդ զաւաները: Մահուան զալուկը զրուժ մուել էր արդէն նրա ծալուած ձեռքերի վրայ. երբ Արթաբանը նրա ձեռքն արձակեց, բաղուկն անշարժ ընկաւ իր անզգայ կլծքին:

Նա ետ զարձաւ սիրտը կարեկցութեամբ լիցուն, ձգելով մարմինը այն տարօրինակ թաղման որ Մոգերը ամենասպացան համարում անսպասի թաղումը, որից ցիներն ու անզգերն են բարձրանում զալապաղի, տւազի վրայ ճերմակ սոկրների մի կոյտ միայն ձգելով:

Բայց հէնց որ նա զարձաւ, երկար, նուազկոտ ու հոգեւին մի հառաչք զուբս թուաւ մարդու շրթունքներից: Նրա թուի ու սոկրոս մատները մի

ցնցումով փակուեցան Արթաբանի  
պատմումանի քզանցքին եւ ամուր բըռ-  
նեցին։ Նրա սիրուը մինչեւ կոկորդը  
բարձրացաւ, սակայն ոչ թէ վախից,  
այլ այս կոյր ուշացումի անտանելիու-  
թեան գառը տհաճութիւնից։

Ի՞նչպէս կարող էր նա այս խաւա-  
րի մէջ մնալ մի մեռնող օտարականի  
ինամելու համար. մարդկային կեանքի  
այս անծանօթ բեկորը ի՞նչ էր ուզում  
*իր զութիցն ու ծառայութիւնից.* Եթէ  
իոյնիսկ մէկ ժամ վարանելու լինէր  
այստեղ, գժուար թէ կարողանար Բոր-  
շիսպահ հասնել որոշուած ժամանակին։  
Իր ընկերները պիտի մտածէին թէ նա  
թողել է ճամբորդելու միաքը, եւ ա-  
ռանց իրեն պիտի մեկնէին. ինքը պի-  
տի կորցնէր իր որոնումը։

Բայց եթէ նա հիմա իր ճամբան  
չարունակէր, մարդը անչուշտ պիտի  
մեռնէր։ Մինչդեռ եթէ սպասէր, թեր-  
եւս կարելի լինէր նրա կեանքը վերա-  
դարձնել։ Նրա հոգին ճգնաժամի ստի-  
պողականութեան տակ հեւում էր ու

յուզում։ Իր աստուածային հաւատքի  
մեծ վարձատրութիւնից մի՞թէ պիտի  
զրկուէր մարդկային սիրոյ մի փոքրիկ  
գործի համար։ Մի՞թէ պիտի չեզուէր  
ասաղից, նոյնիսկ մի վայրկեան, մի  
բաժակ սառը ջուր տալու մի ինեղձ ու  
մեռնող երբայիցու։

— Ճշմարտութեան ու Մաքրու-  
թեան Աստուած՝ — աղօթեց նա, — ա-  
ռաջնորդիր ինձ սուրբ շաւզով, իմսո-  
տութեան ճանապարհով, որ միայն  
Քեզ է յայտնի։

Ապա գարձաւ գէպի հիւանդ մար-  
դը, բացաւ նրա բուռը եւ արմաւենու  
սոսւերի տակ, փոքրիկ թումբի վրայ  
տարաւ։

Արձակեց նրա փաթթոցի խիտ ծալ-  
քերը եւ բացաւ պատմումանը ներս ըն-  
կած կրծքից վեր։ Մօտիկ առուներից  
մէկից ջուր բերաւ ու նրա ճակատն ու  
ըթունքները թրջեց. ապա մի գեղ  
պատրաստեց, որ միշտ իր գօտիի մէջ  
պահում — Մոգերը ասաղադէտ լի-  
նելու չափ բժիշկներ էլ էին — եւ կա-

թեցրեց նրա դունաստ շրթունքների մէջ։  
Ժամերավ աշխատում էր նա մի հմուտ  
բժշկի նման։ ի վելչոյ մարզու ոյժերը  
վերապարձան։ նա վեր կացաւ նստեց ու  
սկսեց չուրջը դիտել։

— Ո՞վ ես դու, — հարցրեց նա այդ  
շրջանի կոչա բարառովը, — ինչո՞ւ  
ինձ դատր վերապեցնելու համար։

— Ես Արթարան Մոգն եմ, Եկ-  
րատան քաղաքից, ոնում եմ Երուսա-  
ղիմ վիճուելու նրան որ պիտի ծնուի  
իրրեւ Հրէաների թագաւոր, մի մէծ  
իշխան եւ Ազատարար համայն մարդ-  
կութեան։ Չեմ համարձակում աւելի  
ուշանալ, քանի որ ինձ սպասող կարա-  
ւանը կարող է մեկնել առանց ինձ։ Բայց  
ահա քեզ ամեն ինչ որ մնացել է իմ  
հացից ու գինուց, նաեւ բուժիչ խո-  
տեր։ Երբ լլալին կազդուրուես, կարող  
ես Բարելոնի տների մէջ Երբայեցւոց  
բնակարանները դանել։

Երբայեցին իր դողդոջուն ձեռքե-  
րը հանդիսաւորութեամբ դէսի Երկինք  
բարձրացնելով, ասաց։

— Արբահամի, Խսահակի եւ Յա-  
կորի Աստուածը օրհնէ ողորմածի ճամ-  
բորգութիւնը եւ խաղաղութեամբ իր  
փափաղած հանգըռուանին հասցնէ։ Սա-  
կայն կա'ց, որեւէ բան չունեմ քեզ փո-  
խարինելու համար, միայն կարող եմ  
քեզ ասել թէ ո՛ւր պիտի վնասես Մե-  
սիսն։ քանի որ մեր մարդարէները գը-  
րել են թէ նա ոչ թէ Երուսաղէմում այլ  
Յուղայի Բեթէհէմում պիտի ծնուի։  
Թող Տէրը քեզ ապահով այնաեղ հաս-  
ցընէ, որովհետեւ դու գթացիր հիւան-  
դիւ։

Կէս զիշերից շատ էր անցել արդէն։  
Արթարանը շտապով հեծաւ իր ձին, որ  
կարձ հանգստից կաղզուրուած, աշ-  
խոյժով սլացաւ լոիկ մարզերի միջով  
ու զետի ջրանցքներից։ Իր մնացած  
ոյժը ի գործ գնելով սրանում էր նա  
զետնի վրայով եղջերուի նման։


Բայց արեւի առաջին ճառապայթ-  
ները նրա առջեւ տարածեցին Արթա-  
րանի երկարուն սաստերը, երբ նրանք  
ճամբորգութեան վերջին շրջանը մտան։

Արթարանի աչքերը, որ անձկութեամբ  
գիտում էին Նիմրուդի մեծ պարիսպն  
ու «Եօթը Գնաեր» Տաճարը, չը կարո-  
ղացան իր բարեկամների ամենադոյզն  
հետքն իսկ նշմարել:

Բաղմերանց դարաստափերը,— ե՛ւ  
ոււ, եւ' նարնջի ու կարմիր, եւ' գեղին,  
եւ' կանաչ ու կապոյտ, եւ' ճերմակ—  
ընութեան ցնցումներից պատառոտուն,  
եւ մարդկային բոնութեան շարունա-  
կական հարուածների տակ փշրուած,  
փայլվում էին զեռեւս, ինչպէս աւեր-  
ուած ծիածանը ցերեկուայ լոյսի տակ:

Արթարանը արագութեամբ ձին քը-  
շեց ու բլրի չորս կողմը պատեց. ապա  
վայր իջաւ ձիուց, մաղլցեց ամենա-  
բարձր դարաստափը ու նայեց դէպի  
արեւմուտք:

Ճահճուաների անհուն ամայութիւնը  
երկարում էր մինչեւ հորիզոնը և անա-  
պատի եղերքը: Բոտորները ցցուել էին  
անշարժ լճակների մօտ և չափալները  
պահւում էին ցածուկ թիւրի մէջ.  
սակայն Մողերի քարաւանի հետքն իսկ



«Վերցրեց ու կարդաց»

չը երեւում, ոչ մօտերում, ոչ էլ հեռում:

Դարաստավիի եղերքին կոտրասուած աղիւսների մի կոյտ տեսաւ, տակը՝ մագաղաթի մի կտոր։ Վերցրեց ու կարդաց.

«Մենք ժեզ սպասեցինք մինչեւ կէս զիշերից ել անց. չենք կարող աւելի ուշանալ։ Մենք զնում ենք Թագաւորին փնտուելու։ Հետեւիր մեզ անպատի միջով։»

Արթարանը նստեց գետնին ու ձեռքերովն երեսը ծածկեց։

— Ի՞նչպէս կարող եմ անապատն անցնել, — ասաց նա, — առանց ուտելիքի եւ մի յոդնած ձիով։ Բաբելոն պիտի վերադառնամ ու ծախեմ շափիւզաս եւ ուղտերի մի կարաւան ու ճանապարհի պաշար գնեմ։ Կարելի է թէ երբէք էլ չը հասնեմ իմ բարեկամներիս։ Միայն ողորմած Աստուածը գիտէ թէ արդեօ՞ք ողորմութիւն անելու համար ուշանալով պիտի զրկուե՞մ թագաւորի երեսը տեսնելուց։

ՓՈՐՄԻԿ ՄԱՆԿԱՆ ՍԻՐՈՅՆ ՀԱՄԱՐ

---

---

ՓԱՐՔԻԿ ՄԱՆԿԱՆ ՍԻՐԱՅՆ ՀԱՄԱՐ

Լոեց ամէն ինչ երազների աշխարհ-  
հում ուր Միւս Մողի պատմութիւնն  
էի լուսմ . ու այս լուսթեան միջով տես-  
նում էի նրա կերպարանքը , թէպէտեւ  
շատ ազօտ , որ ընթանում էր անարդարի  
տիսուր ծփանքների վրայով իր ուզափ  
մէջքին նստած , միշտ գէպի առաջ օ-  
րօբուելով գերթ մի նստակ՝ ալիքների  
վրա :

Մահն իր դաժան ուսոկանի տարա-  
ծում էր նրա չուրջը : Քարքարոտ հո-  
ղը պառւղ չունէր , բայց միայն վշեր  
ու տատասկներ :

Ժայռերի գորշ շրթները դուրս էին  
ցցուել այսաեղ ու այնաեղ երկրի մա-  
կերեսի վրայ , հիւծուած հրէշների կը-  
մախքի պէս :

Զոր ու անձիւրքնկալ լեռնաշղթա-  
ները , հինաւուրց ցամաք հեղեղասնե-  
րով պատաստուն , բարձրանում էին  
նրա դիմաց ձերժակ ու մեռելատիպ ,  
որպէս սովորներ բնութեան երեսի վրա :

Անկայուն աւազի վտանգաւոր բլուրները  
դերեցմանների պէս կուտակուել էին  
հորիզոնի երկարութեամբ։ Յերեկը  
կատազի տօթը ճնշում էր զողացող օղի  
վրայ իր անտանելի ծանրութեամբ։ որ-  
եւէ արարած չէր շարժւում մարտկ երկ-  
րի երեսին, միայն վախտ թակերն էին  
սողսոկում արեւակէղ թփերի մէջ և  
մողէնները անհետանում ժայռի հազար  
ու մի ճեղքերում։ Գիշերը ցերեկուայ  
տօթին յաջորդում էր զատնաշունչ ու  
հարստածող ցաւրար։ ամայութիւնն մէջ  
չափանիերն էին թափառում ու հաջում,  
մինչ առիւծն իր ահաւոր մոնչիւնով  
դզրպեցնում էր մթին հեղեղաները։

Այսպէս, տօթի ու ցրտի միջով  
շարժւում էր Մողը հաստատակամ միշտ  
յստով։

Ապա տեսայ Արանա ու Փարփար  
զետերի վտանկներովը ոսողուած Դա-  
մասկոսի պարտէղներն ու այգիները,  
բողբոջուն ու գառիվայր մարդերով և  
զմուռոսի ու վարդերի թփառներով  
պձնուած։ Տեսայ նաեւ Հերմոն լեռան

Երկայնաձիդ ու ձիւնածածկ կատարը,  
եւ՝ մայրիների ստուերախիտ պուրակ-  
ները, եւ Յորդանանի հովիտը, եւ  
Փալիլիայի լճի կապոյտ ջրերը, եւ  
կղղրելիայի արգաւանդ գաշտավայրը,  
Եփեմի բլուրներն ու Յուդայի լեռ-  
նաշխարհը։ Այս բոլոր վայրերի մի-  
ջով հետեւում էի Արթարանին, որ ան-  
յողոսով ընթանում էր միշտ յառաջ  
մինչեւ որ հասաւ Բեթէհէմ, ուր ճիշտ  
երեք օր առաջ Արեւելքի երեք Մողերը  
գլուխ գտել էին Մարիամին ու Յով-  
սէփին մանուկ Յիսուսի հետ, եւ իրենց  
ընծաները— ոսկի, կնարուկ եւ զմուռո-  
ւ նորածին թագաւորին մատուցելով  
վերապարձել էին։

Յառաջանում էր Միւս Մողը՝ յող-  
նած, բայց յոյսով միշտ գուարթ, իր  
հետ աանելով իր կարմիր բուստն ու  
մարդարիտը Թաղաւորին մատուցելու։  
«Այժմ,— ասում էր նա ինքնիրեն, —  
վերջապէս պիտի զանեմ նրան, թէեւ  
մէնակ եւ իմ եղբայրներից յետոյ։ Այս  
է այն վայրը որի մասին, ինչպէս որ

Երբայեցի տարագիրն առաց, դրել են  
մարզարէները. այսահեղ պիտի տեսնեմ  
մեծ լոյսի ծագելը: Բայց նախ իմ բա-  
րեկամների այցելութեան մասին պիտի  
տեղեկանամ եւ թէ արդեօք ասողը  
նրանց գէպի ո՞ր առւնն է առաջնորդել  
եւ ու՞մն են մատուցել իրենց ընծանե-  
րը»:

Գիւղի վուղոցները կարծես ամա-  
յացել էին եւ Արթարանը զարմանում  
էր թէ արդեօք մարդիկ բոլո՞րն էլ րը-  
լուրների արօներն են զնացել իրենց  
զառները առն բերելու:

Քարաշն ու ցածլիկ մի խրճիթի  
րաց գոնից կանացի մի ձայն լսեց. նա  
երգում էր մեզմօրին: Մոգը ներս  
մտաւ ու տեսաւ մի մասղաշ կին իր  
մանկիկը քնացնելիս: Կինը նրան պատ-  
մեց հետաւոր Արեւելքի օտարականների  
մասին թէ ինչպէս երեք օր առաջ երե-  
ւացել են զիւղում տաելով թէ մի ասող  
իրենց առաջնորդել է այստեղ ուր նա-  
զովրեցի Յովսէմին իր կնոջ ուր նորածին  
մանկան հետ իջևանել էր, եւ թէ ինչ-

ովէս նրանք մանկանը Երկրպագել ու  
թանգաղին նուէրներ են մատուցել:

— Սակայն ճամբորդները յանկարծ  
անհետացան՝ ինչպէս որ եկել էին. մենք  
վախեցանք նրանց օտարատի այցելու-  
թիւնից եւ չը կարողացանք հանկանալ  
այդ այցի իմաստը. Նազովրեցին մա-  
նուկն ու իր մայրը առնելով այդ զի-  
շերն եւ եթ ծածուկ փախաւ. չըուկներ  
կային թէ նրանք շա՞տ հեռու են գնում,  
զէպի Եղիպտոս: Այն օրից ի վեր զիւ-  
ղի վրայ գիւթութիւն կայ. մի չար բան  
է սպասւում: Ասում են թէ Հոռվա-  
յեցի զինուորները Երուսաղէմից գալիս  
են մեզ վրայ նոր տուրք գնելու. մեր  
տղամարդիկ հօսերն ու խաշինքներն  
առել տարել են հեռաւոր բլուրները եւ  
այստեղ ծածկուել, այս տուրքից ա-  
զատ մնալու համար:

Արթարանը լսում էր նրա անկեղծ  
ու Երկչու խօսակցութիւնը, մինչ վոք-  
րիկ մանուկը մօր գրկից իրեն էր նա-  
յում ու ժողովում, կարմրիկ ձեռքերը  
մեկնելով նրա կրծքի ոսկէ թեւաւոր

օղակը բոնելու համար։ Արթարանի  
սիրու յուզուեց այս հպաւմից։ Կարծես  
թէ սիրոյ ու վասահութեան մի ողջոյն  
էր այդ ուղղուած մէկին որ երկար ճամ-  
բարդել էր միայնութեան ու վարանում-  
ների մէջ, պայքարելով ի՛ր իսկ կաս-  
կածների եւ վախերի գէմ ու այսպէս  
հետեւելով մի լոյսի որ այժմ ամսկերի  
մէջ էր ծածկուել։ «Ի՞չո՞ւ այս մա-  
նուկը չը լինէր «Խոստացուած իշխա-  
նը», — թաղաւորները սրանից աւելի  
խոնարհ աների մէջ են ծնուել. աստ-  
ղերի սիրականնը կարող է նոյնիսկ խըր-  
ճիթից րարձրանալ։ Սակայն իմաս-  
տուն Աստուծուն րարի չի թուացել այս-  
քան շուտ ու այսքան զիւրութեամբ իմ  
որոնումը վարձատրել։ Նա որին փըն-  
տըռում եմ զնացել է իմ առջեւից. ես  
թաղաւորին պիտի հետեւեմ մինչեւ ե-  
ղիպտոս։»

Դեռահաս կինը մանկիկը օրօրոցի  
մէջ դրաւ եւ բարձրացաւ օսարոսի  
հիւրի կարիքները հոգալու որին բախ-  
տը իր առւննն էր առաջնորդել։ Նրա

առջեւ ուտելիք դրաւ — գեղջուկի ճա-  
շը՝ աղքատիկ, բայց յօժար սրանվ մա-  
տուցուած, ըստ որում կարող կաղ-  
դուրելու մարմնի չափ նաեւ հոգին։  
Արթարանը երախտազիտութեամբ այդ  
մանղունեց եւ մինչ նա ուտում էր, մա-  
նղուկը անոյշ նիրէի մէջ մտաւ ու մըր-  
մընջում էր կամացուկ իր երազների  
մէջ. անգորը սենեակը մէծ խաղաղու-  
թեամբ լցուեցաւ։


Բայց յանկարծ դիւզի փողոցներում  
լուսեցին իրարանցումի եւ ամբոխի կա-  
տաղի աղմուկի ձայներ, կանանց ճիչեր,  
լաց ու կոծ, պղնձէ փողերի շաչին,  
սուրերի բաղխիւն եւ մոլեզին մի աղա-  
ղակ — «Զինուորները, Հերովզէսի զին-  
ուորները կոտորում են մեր մանուկ-  
ներին . . .»։

Դեռահաս մօր երեսը զունատուեց  
վախից։ Նա զրկեց իր մանկիկը եւ ան-  
վարժ կծկուեցաւ սենեակի ամենախա-  
շարժ անկիւնում, իր հազուստի քպանցք-  
ւար անկիւնում, իր հազուստի քպանցք-  
ւար նրան ծածկելով որ չը լինի թէ  
արթանանայ եւ լայ։

Բայց Արթարանը շտապով գնաց եւ  
տան դրսի գոան չէմքին կանգնեց : Նրա  
լայն թիկունքը լեցնում էր ամբողջ  
մուտքը մի կողմից միւսը, մինչ իր  
ճերմակ խոյրի կատարը դիպչում էր  
դոան դրանդիքին :

Զինուորները բարձրանում էին փո-  
ղոցն ի վեր արիւնաթաթաւ ձեռքերով  
եւ դաշոյներով : Օտարականին իր օ-  
տարոտի հազուսաների մէջ տեսնելով,  
յանկարծակիի եկան նրանք ու զար-  
մանքով վարանեցին յառաջանալ : Խլմ-  
րապետը դուանը մօտեցաւ մէկ կողմ  
չրելու Արթարանին, որ անշարժ կանդ-  
նել էր իր տեղում : Նրա դէմքն այն-  
քան անդորր էր, որ կարծես թէ ասու-  
ղերն էր դիտում . նրա աչքերում վառ-  
ւում էր այն անչէջ բոցը որի դէմ վայ-  
րենի ընձառիւծն անդում կծկում է ու  
վայրադ բարակն իսկ զետնին միւսում  
իր ցաթքի մէջ : Արթարանը լուսվեամբ  
զինուորին մի վայրկեան պահելով,  
ցած ձայնով նրան ասաց .

— Բոլորսվին մենակ եմ ևս այս-



«Բոլորովին մեկնակ եմ ևս այստեղ»

տեղ եւ սպասում էի այս գոհարը խո-  
չեմ զնդադեալին առև որ ինձ հանդիսա-  
ձգէ :

Կարմիր բուսալ իր ակի մէջ չող-  
շողում էր զերթ արեան մի խոչոր կա-  
թիւ :

Գնդադեալ զոհարի վայլից հիմ-  
աւու : Նրա աչքերի բիրերը ուռեցին  
ցանկութեամբ եւ տենչանքի կարծր զի-  
ծերը խորշոմեցին նրա զմթունքների  
շուրջը : Նա ձեռքը մեկնեց եւ զոհարն  
առաւ :

— Յառաջ, — բղաւեց նա իր զին-  
ուորներին, — այսուղ երեխայ չը կայ,  
առանց հանդարան է :

Աղագակն ու զէնքերի շառաչը ան-  
ցաւ փողոցն ի վայր, ինչպէս որսահա-  
րածի յանդուզն կատապաւթիւնը սուրում  
անցնում է շատ ժօտիկ այն թագստո-  
ցին ուր զողացող եղջերուն է պահուած :

Արթարանը նորից խրճիթը մտաւ.  
Նա իր երեսը զէպի Արեւելք դարձրեց  
ու աղօթեց . «Աստուած Ճշմարտու-

թեան, ներիր իմ մեղքը. մանկան կեան-  
քը փրկելու համար չ'եղած բանն ասա-  
ցի: Իմ երկու ընձաներն էլ զնացին.  
այն ինչ որ Անտուծոյ համար էի ուր-  
բազործել, մարդու համար զործածե-  
ցի: Արդեօք արժանի պիտի լինե՞մ  
Երեւեցէ Արքայի երեսը տեսնելու:»

Բայց նրա ետեւում՝ շուքի մէջ ու-  
րախութիւնից արտասուող կինը մրմւն-  
ջում էր շատ մեղքօրէն.

— Քանի որ դու իմ մանկան կեան-  
քը փրկեցիր, Եհովան օրինէ ֆեզ եւ  
պահէ ֆեզ. Եհովան պայծառացնէ իր  
երեսը ֆեզ վրայ եւ ողորմի ֆեզ. Եհո-  
վան բարձրացնէ իր երեսը ֆեզ վրայ  
եւ խաղաղութիւն տագ ֆեզ:

## ՑԱԽԵՐԻ ՄԻԶՈՎ

ՅԱԿԵՐԻ ՄԻՋԱՎ.

Դարձեալ լոռւթիւն տիրեց Երազ-  
ների Աշխարհում, աւելի խորը ու աւե-  
լի խորհրդառուր. և և հասկացայ թէ  
Արթարանի տարիները առհում էին ա-  
րագութեամբ թանձր մշուշի անդոր-  
րութեան միջով։ Շրջապատող այդ  
մէջի մէջ երբեմն-երբեմն նշմարում էի  
նրա կեանքի գեաը, որ տեղ-տեղ փայ-  
լում էր իր հոսանքը պարուրով չուքերի  
միջից։

Նրան տեսայ մարդաշատ Եղիպառ-  
ոի խուժանի մէջ, Տեթիչէմից եկող  
ընտանիքի հետքերը վհասոելիս և Հե-  
լիօպորի ժանտաթղենիների ու Նեղո-  
սի ավիին կառուցուած Նոր-Բարելոնի  
Հոռվժէական ամրոցների պարխաղների  
ստորառում դանելով հետքեր՝ այնքան  
վախտ ու աղօտ, որ շարունակ կորչում  
էին նրա առջեւից ինչպէս գետեզրի խո-  
նաւ աւաղի վրայ դրսմուած ոսքի հետ-  
քերը, որ փայլում են մի վայրկեան եւ  
աղա խկոյն անհետանում։

Նրան տեսայ պիլամիդների ստո-  
րոտում որոնց սուր զլուխները միւռում  
էին վերջալոյսի խիստ կարմբութեան  
մէջ— անփոփոխ յուշարձաններ մարդ-  
կային վաղանցիկ վառքի ու անվախ-  
ձան յոյսի : Նա երկար դիտեց սովացող  
Սֆինքսի վատահեղ զէմքը եւ ի գուր  
ջանաց կարգալ նրա անդորր աչքերի  
ու ժպտացող շրթների խմասալ : Արդ-  
եօք բոլոր ջանքերի ու ներշնչումների  
ծա՞ղրն էր այդ խկապէս— ինչպէս  
Տիգրանն էլ ասել — անլուծելի հանե-  
լուկի եւ ապարզիւն որոնումի անդութ  
ծա՞ղրը, թէ՞ դութի ու քաջալերանքի  
մի վտորձ էր այդ անքննելի ժողիտի մէջ՝  
մի խոստմունք թէ պարտուածն խկ  
պիտի յաղթէ եւ յուսալքուածը պիտի  
շահէ մրցանակը, թէ աղէտը խմասուն  
պիտի զառնայ ու կոյըը պիտի տեսնի  
եւ իր ձամբաների մէջ մոլորուած ուխ-  
տաւորր վերջապէս իր հանգրուանին  
պիտի հասնէ :


Ապա նրան տեսայ Ալեքսանդրիայի  
մի մթին տան մէջ Երբայիցի մի բարեին

հետ խորչը լուկացելիս : Պատկառելի ծե-  
րունին իսրայէլի մարգարէութեան մա-  
զաղաթների վրայ խոնարհած կարգում  
էր բարձր ձայնով այն սրտառուչ հա-  
մարները ուր նախագուշակուած էին  
տանջանքները խոստացուած Մեսիայի՝  
«մարդկանցից անարգուած ու մերժը-  
ւած, հարուածների տէր ու ցաւերի  
տեղիակ» :

— Եւ յիշի՛ր, որդիս, — ասաց նա  
իր խորաթափանց աչքերը Արթարանի  
դէմքին յառելով, — Թաղաւորը, որին  
զու վհստառում ես, պալատի մէջ պիտի  
չը գտնուի, ոչ խկ հարուածների ու  
զօրաւորների մէջ : Եթէ աշխարհի լոյ-  
սըն ու իսրայէլի վառքը աշխարհիկ վե-  
հափառութեամբ դալու սահմանուած  
լինէր, վաղուց եկած պիտի լինէր : Ոչ  
բովհետեւ ոչ ոք պիտի չը տիրանայ այն  
զօրութեանը որ Յովսէփին ունէր Եգիպ-  
տուսի պալատառում, ոչ խկ ձեռք պիտի  
րերէ այն չքեզութիւնը որ Սողոմոնն  
ունէր Երուսաղէմում առիւծների վրայ  
թաղաւորելիս : Այն լոյսը որին աշ-

խարհը սպասում է մի նո՞ր լոյս է — այն  
փա՛ռքը, որ պիտի բարձրանայ երկայ-  
նամիտ ու յաղթական տանջանքից . . . :  
Եւ այն թագուռութիւնը, որ յաւիտ-  
եան մնալու համար պիտի հիմնուի,  
կատարեալ ու անողարտելի սիրոյ թա-  
գաւորութիւնն է . . . : Զր զիտեմ թէ սո-  
ի՞նչպէս պիտի կատարուի, ոչ իսկ թէ  
ի՞նչպէս այսաշխարհի կոռւարար թա-  
գաւորներն ու ժողովուրդները Մեսիան  
պիտի ընդունեն ու նրան պիտի հնա-  
գանդեն: Բայց ևս այս մէկը զիտեմ թէ  
նրան վնասովները լաւ կանեն խեղճերի  
ու նուասաների, տանջուսովների ու ճշն-  
շուածների մէջ վնասուել:

Ու այսպէս, կրկին ու կրկին տես-  
նում էի Միւս Մողին տեղէ տեղ ճամ-  
բորդելիս, տառանդական ժողովուրդ-  
ների մէջ Բեթլէհէմի փոքրիկ ընտանի-  
քր վնասուելով, խորհելով թերեւս նրանց  
մէջ ազգաստանած լինէր: Նա անցաւ  
այն գտառները, ուր սովոր շատ սաս-  
տիկ էր, ուր խեղճերը մի կտոր հացի  
համար էին աղաղակում: Ժանաւիսով



«Բժշկից Հիւանդին»

զարկուած քաղաքների մէջ բնակուեց,  
ուր հիւանդներն անձար թշուառութեան  
դառն ընկերակցութեան մէջ էին տա-  
ռապում : Այցելեց մնշուածներին ու  
վշտացեալներին բանտերի եւ բաղմա-  
մարգ ու թշուառ գերեվաճառանոցների  
մէջ . այցելեց եւ թիսպարտներին ի-  
րենց տաժանակիր աշխատանքների մէջ :  
Անձկութեան այս խուռներամ ու խառ-  
նաշփոթ աշխարհում թէեւ երկրպագու-  
թեան արժանի մէկը չը դուռ, սակայն  
օդնութեան կարօտ շատերին պատա-  
հեց . կերակրեց սովածին, հագցրեց  
տկլորին, բժշկեց հիւանդին ու մխիթա-  
րեց գերիին :

Ու անցնում էին նրա տարիները ա-  
ւելի սրմթաց քան սստայնանկի մակո-  
ղը որ կտափ հորի միջով յետ ու առաջ  
է նետում արագօրէն, մինչ կտաւն ա-  
ճում է ու սստայնանկի սրտի մէջ գը-  
ծաղրուած անտեսանելի օրինակը լրա-  
նում :

Թւում էր թէ նա զբեթէ մոռացել  
էր իր որոնումը : Բայց միանդամ մէ

բողէ նրան տեսայ արեւածազին Հռով-  
մէական մի բանտի գարպասի մօտ մի-  
այնակ սպասելիս : Նա զուրս հանեց  
իր ծոցի թափսառցից մարզարիտը, իր  
զոհարներից վերջինը . Երբ նրա վրայ  
նայեց, մի շատ քնքոյչ փայլ՝ լազուր ու  
վարդագոյն ցոլքերով զեղուն՝ մի մեզմ  
ու զիւթիչ լոյս զողղոզաց զոհարի վը-  
րայ . կարծես թէ կորած շափիւզայի եւ  
կարմիր բուստի զոյների ցոլքերը ծծած  
լինէր իր մէջ : Այսպէս է նաև մի սոկ-  
նիւ կեանքի խորունկ ու ծածուկ նպա-  
տակը, որ անցեալ ուրախութեան եւ  
տրամութեան յիշատակները իր մէջ է  
ծծում : Ամեն ինչ որ նպաստել եւ տ-  
մեն ինչ որ արզելը է հանդիսացել այդ  
նպատակին մի յուշիկ կախարդութեամբ  
փոխանցում է զրա՛ խոկ էութեանը  
մէջ : Այսպիսով այդ նպատակը դառ-  
նում է աւելի լուսաւոր ու աւելի թան-  
գաղին, եւ ա'յնքան աւելի, որքան ա-  
ւելի մօտիկ է տարւում բարախող ուր-  
տի կենսայի ջերմութեանը :

Եւ ի վերջոյ, երբ մատածում էի այս  
մարզաբանի եւ իր իմաստի վրայ, լոկ-  
ցի Միւս Մողի պատմութեան վերջո-  
բանը :



**ՄԵԾԱԳԻՆ ՄԱՐԳԱՐԻՏԸ**


ՄԵԾԱԳԻՆ ՄԱՐԳԱՐԻՏԻ

Երեսուն և երեք տարիներ էին անցել Արթարանի կեանքից, և նա լոյտով պիտուղ նոյն ուխտաւորն էր զեռ: Նրա մազերը, ժամանակին Զագրոշի սեպ ժայռերից աելի սեւ՝ այդ ժայռութերը ծածկող ձմեռուայ ձիւնի ոլէս ճերմակել էին այժմ. Նրա աչքերը՝ կը բակի բոցերի նման հրացայտ՝ մարել էին մոխրի մէջ մխացող կրակի նման: Հիւծուած, վաստակած ու մեռնելու պատրաստ, բայց միշտ թագաւորին վնասուելով, վերջին անգամ Երուսաղէմ էր եկել: Նա յաճախ այցելել էր Սուրբ Քաղաքը և վնասուել էր Դոլոր փակուղիների բարձրամարդ ասպաւարների, նաեւ սեւ բանտերի մէջ, սակայն աղալրդիւն. Բեթլէ՛չէմից վախած նազով ընտանիքի հետքն իսկ չը կար: Սակայն այսօր նրան թւում էր թէ պէտք էր մի վերջին անգամ էլ փորձել. Նրա որսում մի բան վափսում էր թէ մի զուցէ վերջապէս յաջողի:

Զատկի օրերն էին։ Քաղաքը լեց-  
ուել էր օտարականներով։ Իսրայէլի  
որդիները աշխարհի բոլոր հեռաւոր ան-  
կիւններից Տաճարն էին վերապարձել  
մեծ տօնի համար։ շատ օրերից ի վեր  
քաղաքի նեղինք փողոցներում լեզունե-  
րի մի շփոթութիւն էր ալիքում։

Բայց այսօր բազմութեան մէջ մի  
մասնաւոր շարժում էր նկատուում։ Եր-  
կինքը սքողուած էր չարազուչակ մոսա-  
լութեամբ։ Ամբոխը յուղուած էր ինչ-  
պէս որսորից ցնցուած անտառը փոթոր-  
կի նախօրեակին։ Մի անձանօթ հո-  
սանք նրանց բոլորին դէպի միեւնոյն  
կողմն էր քշում։ Սանդալների ազմու-  
կը եւ քարերին բաղխուող հաղարտուոր  
բորիկ ոտների մեզմ ու խուլ ձայնը  
բարձրանում էր անընդհատ Դամակո-  
սի գարպասը տանող փողոցի երկարու-  
թեամբ։

Արթաբանը միացաւ մի խումբ հա-  
մերկրացի մարդկանց՝ պարթեւ հրէտ-  
ների՝ որ Զատիկը կատարելու համար  
երուսաղէմ էին եկել, եւ նրանց հար-



«Արքաբանը միացաւ մի խումբ համերկրացի  
մարդկանց»

յրեց այս իրարանցումի պատճառը եւ  
թէ իրենց գնալիք տեղը:

— Գնում ենք քաղաքի պարիսպնե-  
րից դուրս Գոզգոթա կոչուած վայրը՝  
պատախանեցին նրանք, — ուր այսօր  
մի մեծ պատիժ պիտի գործադրուի.  
մի՞թէ չը գիտես թէ երկու աւազակ-  
ներ պիտի խաչեն եւ նրանց հետ էլ մէկ  
ուրիշը՝ Յիսուս Նազովրեցի անունով,  
որ շատ զարմանալի գործեր է կատա-  
րել Ժողովրդի մէջ, այնպէս որ նրան  
շատ են սիրում։ Բայց քահանաներն ու  
երէցները նրան մահուան են զատա-  
պարտել, որովհետեւ նա իրեն Աստու-  
ծոյ Որդի է հռչակել։ Պիղատոսն էլ  
նրան խաչուելու ուղարկեց որովհետեւ  
նա ասել է թէ ինքը «Հրէաների Թագա-  
ւորն» է։

Այս բառերը շատ լաւ ծանօթ էին  
Արթարանին, սակայն ինչո՞ւ այժմ այս-  
քան տարօրինակ էին հնչում իր յոդ-  
նած սրտին։ Զէ՞ որ այդ բառերն էին  
առաջնորդել իրեն ծովի ու ցամաքի  
վրայով տարինել շարունակ։ մինչդեռ

այժմ որքա՞ն մութ ու խորհրդաւոր էին  
թւում, կարծես յուսահատութեան մի  
պատգամ լինէին: Թագաւորը յայտնը-  
ւել էր, բայց նրան մերժել են ու լքել.  
կորչելու մօտ էր հիմա, թերեւս նոյն-  
իսկ մահուան հոգեւարքի մէջ: Արդ-  
եօք այս խկապէս նա՞ էր, որի մասին  
մարգարէները յայտնել էին եւ որ երե-  
սուն եւ երեք տարիներ առաջ ծնուեց  
ԲԵՐԵՀՀՄՈՒՄ, ու իր աստղն էլ երկըն-  
քում երեւաց:

Արթարանի սիրաը բարախում էր  
անկանոն կերպով անստոյդ ենթադրու-  
թեան վրզովմունքից ու վախից, որ ծե-  
րունիների յուզմունքն է: Բայց նա  
ինքնիրեն ասայ. «Աստուծոյ ճանա-  
պարհները մարդկանց խորհուրդներից  
աւելի անլմրոնելի են. կարելի է թէ  
թագաւորին պիտի գտնամ իր թշնամի-  
ների ձեռքում եւ ժամանակին հասնե-  
լով՝ նա դեռ չսպանուած իր մարգա-  
րիսը պիտի մատուցանեմ իբրեւ նրա  
փրկարգինը:»

Այսպէս, ծերունին հետեւեց բազ-  
մութեանը համը ու վշտագին քայլերով  
դէպի Դամասկոսի գարպասը: Հաղիւ  
թէ նա անցել էր պահականոցի դռնից  
որ մի խումբ Մակեդոնացի զինուոր-  
ների հանդիպեց, ովքեր իրենց ետեւից  
քաշկոտելով մի մատղաշ աղջիկ էին բե-  
րում՝ հերարձակ եւ պատառուած հա-  
գուստներով: Հէնց որ Մողը կանգ  
առաւ ու կարեկցութեամբ աղջկան նա-  
յեց, իրեն չարչարողների ձեռքից աղ-  
ջիկը փախաւ ու փոռւեց Միւս Մողի  
ուսքերի առջեւ, նրա ծունկերը գրկելով:  
Աղջիկը նշմարել էր Մողի խոյրին ու  
կրծքի ոսկէ թեւաւոր օղակը:

— Գթա՛ ինձ, — աղաղակեց նա, —  
եւ փրկի՛ր ինձ ի սէր Մաքրութեան Աս-  
տուծոյ: Մողութեան ճշմարիտ կը օն-  
քի գուստը եմ ևս էլ: Հայրս մի պար-  
թեւ վաճառական էր, բայց նա մեռաւ.  
ինձ բռնեցին նրա պարտքերի զիմաց  
իրեւ գերի ծախելու: Փրկի՛ր ինձ  
մահուանից էլ վատթար այս վիճակից:  
Արթարանը սոսկաց:

Նրա հոգիի մէջ դարձեալ սկսուեց  
այն հին պայքարը որ առաջին անդամ  
յայսնուեց Բարելոնի արմաների պու-  
րակում եւ ապա Բեթէհէմի խրճիթի  
մէջ— հաւատքի ակնկալութեան եւ սի-  
րոյ պահանջի միջեւ մզուղ նոյն հին  
պայքարը :

Կրօնական պաշտամունքի համար  
յատկացրած իր ընծաները իր ձեռքից  
երկիցս կորզուել էին մարդկային ծա-  
ռայութեան համար : Այս երրորդ փոր-  
ձըն էր որին նա ենթարկում էր, վեր-  
ջին քննութիւնը՝ վճռական ու անդառ-  
նալի ընտրանքը :

Մի մեծ պատեհութի՞ւն էր այս,  
թէ՞ իր վերջին փորձութիւնը— չը գի-  
տէր : Սակայն իր մտքի խաւարի մէջ  
այս մէկը պարզ էր թէ անխուսափելի  
էր այդ . եւ մի՞թէ անխուսափելին Աստ-  
ուածանից չէ :

Իր պառակտուած որտի համար այս  
միայն որոշ էր, թէ այս անօդնական  
աղջկան աղատելը սիրոյ մի ճշմարիտ

գործ էր . եւ մի՞թէ սէրը չէ հոգու  
լոյնը :

Նա դուրս հանեց մարզարիտը, ո-  
րը երբէք այդքան պայծառ ու փայ-  
լուն, այդքան զորովալի ու կենսալի,  
այդքան չքեզ չէր երեւացել : Ապա  
զոհարը զերի աղջկայ ձեռքը դնելով,  
սասց :

— Այս քո վրկազինն է, դու՛ստր .  
Թագաւորի համար պահած դանձերիցս  
վերջինն է այս :

Եւ մինչ նա խօսում էր, երկնակա-  
մարի խաւարը թանձրացաւ ու ցնցող  
սարսուռներ անցան երկրի միջով, որ  
սկսեց հեւալ՝ զօրաւոր կոկիծի հետ  
մաքառող մարդի կրծքի նման :

Տների պատերը տեղ-տեղ օրօրուե-  
ցին : Քարերը պոկուեցին եւ շառաչով  
փողոցը թափուեցան : Փոշուամպերը  
օդը լցրին : Զինուորները փախան ա-  
հարեկ՝ հարբած մարդի պէս օրօրուե-  
լով : Արթարանը եւ իր վրկած աղջկիը  
Աղօթատան պատի տակ քաշուեցին ան-  
օդնական :

Նա ինչի՞ց պիտի վախենար։ Այլ-  
ուս ինչի՞ց համար ապրէր։ Թագաւորի  
ընծաներից վերջինն էլ արդէն տուել  
էր։ Նրան գտնելու վերջին յոյսն իսկ  
կորցրել էր։ Որոնումը վերջացել էր,  
և ասլարդիւն...։ Սակայն նոյն իսկ  
այս խորհրդի մէջ, որ նա այժմ ամ-  
բողջ սրտով ընդունել էր, խաղաղու-  
թին կար։ Այս հրաժարուել էր, ոչ  
իսկ համակերպութիւն էր, այլ աւելի  
անբորնելի մի բան։ Նա դիմէր որ  
այլեւս ամեն բան բարի էր սրովհետեւ  
ինքը իր ուժերը ներածի լաւագոյնն էր  
արել օրէցօր։ իրեն տրուած լոյսին հա-  
ւատարիմ էր մնացել, և աւելին էլ  
փնտուել— իսկ եթէ չէր կարողացել  
գտնել ու իր ամբողջ կեանքը լոկ մի  
անյաջողութիւն էր եղել՝ անտարակոյս  
համարաւորութեան սահմաններում այդ  
էր լաւագոյնը։ Նա զեռ չէր տեսել  
«Յաւիտենական, անապական և անմահ  
կեանք»ի յայտնութիւնը, սակայն լաւ  
դիմէր այժմ թէ եթէ իր երկրային

կեանքը նորից ապրելու լինէր, եղածից  
բացի ուրիշ կերպ չէ կարող լինել։

Երկրաշարժի մի ուշացած հարուած  
գողացրեց գետինը։ Մի ծանր աղիւս  
տանիքից պոկուելով, հարուածեց ծե-  
րունուն Տաճարի մօտ։ Նա գետին փըռ-  
ուեց գժգոյն ու անշարժացած։ Իր ա-  
լեւոր գլուխը հանգչում էր գեռատի  
աղջկայ ուսին, մինչ վէրքից արինը  
կաթիւ-կաթիւ ծորում էր վայր։ Երբ  
աղջիկը նրա վրայ թեքուեց վախենա-  
լով թէ արդեօք նա մեռա՞ւ, վերջա-  
լոյսի միջից մի ձայն լսուեց— շատ բա-  
րակ ու մեղմ, հեռուից լսուող մի երգի  
նման, որի եղանակը որոշ է, բայց բա-  
ռերը՝ ի մի ձուլուած։ Աղջիկը վեր  
նայեց տեսնելու թէ արդեօք մէկը խօ-  
սկ՞ց վերեւի լուսամուտից, սակայն ոչ  
ոքի չը տեսաւ։

Այն ժամանակ ծերունու ըթունք-  
ները սկսեցին շարժուել, կարծես պա-  
տասխանել վասփաղելով։ աղջիկը լսեց  
Մողի Պարթեւերէն այսպէս մըմնջալը.

— Ո՛չ, Տէ՛ր իմ, Ե՞րբ տեսայ քեզ  
սովործ ու կերակրեցի, կամ ծարաւ և  
խմեցրի. Ե՞րբ տեսայ քեզ օտար և ինձ  
մօտ առի, կամ մերկ և հաղցրի. Ե՞րբ  
տեսայ քեզ հիւանդ ու բանտի մէջ և  
եկայ քեզ մօտ: Երեսուն և երեք տա-  
րիներ ես քեզ վիճառեցի, բայց քո երեսդ  
երթք չը տեսայ, ոչ էլ ծառայեցի քեզ,  
ո՛վ իմ թագաւոր:

Լոեց. անոյշ ձայնը դարձեալ լըս-  
ուեց. աղջիկը կրկին լոեց՝ խիստ նուա-  
զուն էր և շատ հեռուից, սակայն իրեն  
այնպէս թուաց թէ այս անդամին ինքը  
հասկանում էր բառերը.

Ճշմարիտ ասում եմ քեզ, որով-  
հետեւ այս իմ փոքր եղբայրներից մէ-  
կին արիր, ինձ արիր:»


Զարմանքի և ուրախութեան մի  
խաղաղ փայլ չողաց Արթարանի դու-

նաս դէմքի վրայ, ինչպէս արշալոյսի  
առաջին շողերը լեռան ձիւնածածկ կա-  
տարի վրայ: Ափոփուած սրտի մի եր-  
կար ու վերջին շունչ մեղմօրէն դուրս  
թռաւ նրա շրթունքներից:

Նրա ճամբորգութիւնը վերջացել  
էր... նրա ընծաները ընդունուել էին:  
Միւս Մողը դտել էր Թագաւորին:



«Միւս Մոզը զսել էր Թագաւորին»



## ՑԱՆԿ

### ԵՐԵՒԱՆ

Ամերիկեան 1899-ի Հրատարա-	
կութեան Յառաջաբանից	11
Նախաբան	15
Երկնից Նշանը	17
Բարելոնի Զրերի Մօտ	45
Փոքրիկ Մանկան Սիրոյն Համար	65
Յաւերի Միջով	79
Մեծագին Մարգարիտը	91

### ՆԿԱՐՆԵՐ

«Միւս Մոզին Պատմութիւնը»	5
«Այս Նշանն էր»	41
«Վերցրեց ու կարդաց»	61
«Բոլորովին Մենակ Եմ Ես Այստեղ»	75
«Բժշկեց Հիւանդին»	85
«Արքաբանը միացաւ մի խումբ համերկրացի մարդկանց»	95
«Միւս Մոզը գտել էր Թագաւորին»	106





